ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի 27.01.2015թ. նիստի

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը գումարվեց 2015թ. հունվարի 27-ին՝ ժամը 17:00-ին, ՀՀ սահմանադրական դատարանի վարչական շենքում: Նիստը վարում էր Հանձնաժողովի տարիքով ավագ անդամ, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ **ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ**:

Մասնակցում էին՝

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար,

ԱՐՄԱՆ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԸ՝ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահ,

ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԸ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ,

ՌՈՒԲԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԸ՝ Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,

ՀՐԱՉԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԸ՝ «Հայաստանի Հանրապետության դատավորների միություն» հասարակական կազմակերպության նախագահ:

Հանձնաժողովի նիստն արձանագրում էր ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի ներկայացուցիչ Միքայել Մինասյանը:

Գ. Հարությունյանը Հանձնաժողովի հաստատմանը ներկայացրեց նիստի օրակարգային հետևյալ հարցերը.

1. Հանձնաժողովի 01.09.2014 թվականի թիվ 1-Լ որոշման, թիվ 1-Լ որոշման 1-ին հավելվածում, թիվ 2-Լ որոշման հավելվածում և թիվ 3-Լ որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու նպատակահարմարության և դրանց կատարման եղանակների մասին հարց:

2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության նոր մրցույթի հայտարարության հաստատման հարց:

3. Ընթացիկ հարցեր:

Հանձնաժողովը միաձայն հավանություն տվեց նիստի օրակարգին:

ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ 1-ին ՀԱՐՑ

Գ. Հարությունյանը ներկայացրեց Հանձնաժողովի անդամների կողմից հիմնական հարցադրումները, որոնք կարող են հանգեցնել Հանձնաժողովի 01.09.2014 թվականի թիվ 1-Լ որոշման, թիվ 1-Լ որոշման 1-ին հավելվածում, թիվ 2-Լ որոշման հավելվածում և թիվ 3-Լ որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելուն:

Միաժամանակ, Հանձնաժողովի անդամների քննարկմանը ներկայացրեց լրացումներ և փոփոխություններ կատարելու նպատակահարմարության և դրանց կատարման եղանակների մասին հարցը:

Հանձնաժողովը միաձայն հավանություն տվեց ներկայացված որոշումներում և կից հավելվածներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությանը:

Գ. Հարությունյանը ներկայացրեց Հանձնաժողովի 01.09.2014 թվականի թիվ 1-Լ որոշման, թիվ 1-Լ որոշման 1-ին հավելվածում, թիվ 2-Լ որոշման հավելվածում և թիվ 3-Լ որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ Հանձնաժողովի անդամների հետևյալ առաջարկները.

1. Հանձնաժողովի 1-Լ որոշման 1.2 կետով սահմանված «*պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնում*» արտահայտությունը ավելի որոշակի դարձնելու նպատակով Հանձնաժողովի 1-Լ որոշման 1.2 կետում առկա «պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնում» արտահայտությունը «*Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնում*» ձևակերպմամբ փոխարինելու առաջարկ:

2. Հանձնաժողովի 01.09.2014 թվականի նիստի արդյունքներով հրապարակված մրցույթի հարցազրույցի ամփոփման արդյունքներով Հանձնաժողովի կողմից գնահատված թեկնածուների կողմից արդեն իսկ ներկայացված փաստաթղթերը հիմք ընդունելու և դրանք կրկին չներկայացնելու կապակցությամբ Հանձնաժողովի 01.09.2014 թվականի թիվ 1-Լ որոշման 1-ին հավելվածում փոփոխություն կատարելու առաջարկ:

3. Հանձնաժողովի 1-Լ որոշման 1-ին հավելվածը մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը հավակնորդի կողմից անձամբ չներկայացվելու դեպքում

լիազորված անձի կողմից հասարակ գրավոր ձևի համապատասխան լիազորագիր ներկայացնելու վերաբերյալ պարբերությամբ լրացնելու առաջարկ:

4. Հանձնաժողովի 2-Լ որոշման հավելվածի 1-ին կետում Հայաստանի Հանրապետության Նախագահի Հրամանագրով սահմանված ձևակերպումը կիրառելու, իսկ նիստերը հրավիրելու գործընթացի ապահովումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմին վերապահելու մասին առաջարկ:

5. Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, որոնք կհրապարակվեն նիստին հաջորդող երեք օրվա ընթացքում, ինչպես նաև յուրաքանչյուր օրվա ընթացքում ընդունված դիմումների մասին տեղեկատվությունը, որը կհրապարակվի մեկօրյա ժամկետում, որպես մրցույթի ընթացքում հրապարակման ենթակա տեղեկություններ սահմանելու և այդ կապակցությամբ Հանձնաժողովի 2-Լ որոշման հավելվածում նոր կետ լրացնելու առաջարկ:

6. Հանձնաժողովի 2-Լ որոշման հավելվածում Հայաստանի Հանրապետության Նախագահի Հրամանագրով հաստատված կարգի 15-րդ կետում նախատեսված գրանցամատյանի նկարագիրը և դրանում գրառման ենթակա տեղեկությունների ցանկը, մասնավորապես՝ հավակնորդի անուն, ազգանուն, հայրանունը, փաստաթղթերը ստանալու օրը և ժամը, նշումներ փաստաթղթերի լրիվության վերաբերյալ, հավակնորդի կամ նրա լիազորված անձի ստորագրությունը, իսկ փոստով փաստաթղթերը ստանալու դեպքում՝ փոստային ծրարի ծածկագրի համարը, սահմանելու առաջարկ:

7. Անգլերենի և ֆրանսերենի երկուական մասնագետների մրցույթին մասնակցությունն ապահովելու համար Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ մասնագետների թեկնածություններ ներկայացնելու նպատակով, դիմելու մասին Հանձնաժողովի կողմից որոշում կայացնելու վերաբերյալ Հանձնաժողովի 2-Լ որոշման հավելվածի 10-րդ կետում փոփոխություն կատարելու առաջարկ:

8. Հանձնաժողովի 3-Լ որոշման 14-րդ կետը ուժը կորցրած ճանաչելու առաջարկ:

9. Քննարկված որոշումներում փոփոխությունները և/կամ լրացումները անմիջապես որոշումների տեքստերում կատարելու և փոփոխված և/կամ լրացված հատվածների վերջում՝ փոփոխության և/կամ լրացման հաստատման վերաբերյալ տեղեկությունները նշելու առաջարկ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՄԻԱՁԱՅՆ ՈՐՈՇԵՑ, հավանություն տալ ներկայացված փոփոխություններին և լրացումներին, հավանություն ստացած փոփոխություններով և լրացումներով, հաստատել Հանձնաժողովի 01.09.2014 թվականի թիվ 1-Լ որոշման, թիվ 1-Լ որոշման 1-ին հավելվածում, թիվ 2-Լ որոշման հավելվածում և թիվ 3-Լ որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծը *(որոշում թիվ 8-Լ)*, հավանություն ստացած փոփոխությունները և լրացումները արտացոլել որոշումների և դրանց հավելվածների խմբագրված տեքստերում՝ փոփոխված և/կամ լրացված հատվածների վերջում նշելով փոփոխության կատարման ձևը և հիմքը:

ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ 2-ՐԴ ՀԱՐՑ

Գ. Հարությունյանը ներկայացրեց նոր մրցույթի մասին հայտարարության նախագիծը և առաջարկեց արդեն իսկ քննարկված փաստաթղթերում կատարված փոփոխությունները արտացոլել նաև հայտարարությունում և հրապարակել սահմանված ժամկետում:

Առաջարկեց նաև՝ հաշվի առնելով նոր մրցույթի անցկացման հիմքում ընկած հանգամանքները, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի ընտրության համար թեկնածուների հարցերով փորձագետների խորհրդատվական խմբի կարծիքը, մրցույթի մասին հայտարարությամբ հավակնորդներին տեղեկացնել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի ընտրության համար թեկնածուների հարցերով փորձագետների խորհրդատվական խմբի գործունեության վերաբերյալ զեկույցում թեկնածուների երկարատև փորձ ունենալու և նրանց երիտասարդ տարիքի պարագայում՝ դատավորին բնորոշ լիարժեք ձևավորված հմտություններ և որակներ ունենալու ցածր հավանականության մասին դիրքորոշման վերաբերյալ:

Հանձնաժողովը միաձայն հավանություն տվեց առաջարկին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՄԻԱՁԱՅՆ որոշեց՝ արդեն իսկ քննարկված փաստաթղթերում կատարված փոփոխությունները արտացոլել նաև հայտարարությունում և հրապարակել սահմանված ժամկետում:

ՈՐՊԵՍ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑ՝ Գ. Հարությունյանն առաջարկեց՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի 2-Լ որոշման հավելվածում հաստատված փոփոխությունները և լրացումները, քննարկել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ մրցույթին ներգրավելու համար անգլերենի և ֆրանսերենի երկուական մասնագետների թեկնածություններ 20 օրյա ժամկետում ներկայացնելու խնդրանքով դիմելու հարցը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՄԻԱՁԱՅՆ որոշեց դիմել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ 20 օրյա ժամկետում մրցույթին ներգրավելու համար անգլերենի և ֆրանսերենի երկուական մասնագետների թեկնածություններ ներկայացնելու խնդրանքով:

Նիստը վարողը հայտնեց, որ Օրակարգային բոլոր հարցերը սպառված են և Հանձնաժողովի նիստը հայտարարում է ավարտված:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ՝

Նիստը վարող՝ **ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ

ՀՐԱՉԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Արձանագրող՝ Միքայել Մինասյան